ՀԱՅ ԴԱՏԸ՝ ՈՐՊԷՍ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔ

Ալեքսանդր Մանասեան

Հայ Դատը ազգային մեր գիտակցութեան մէջ երկար տարիներ գլխաւորապէս կապւում էր դարասկզբի միջազգային այն իրադարձութիւնների հետ, որոնց արդիւնքում, իր պատմական հայրենիքում, ցեղասպանութեան զոհ դարձաւ հայ ժողովուրդը:

Ռուսական կայսրութեան սահմաններում յայտնուած մեր հիւսիսարեւելեան տարածքների մի մասում 1920ին Խորհրդային Հայաստանի ստեղծումը եւ հետագայ տարիներին Խ.Ս.Հ.Մ. սահմաններում յայտնուած մեր ժողովրդի այդ հատուածին կոմունիստական գաղափարախօսութեան պարտադրումը յետին գիծ մղեցին նոյն Թուրքիայի եւ թուրքերի կողմից Արեւելեան Անդրկովկասում հայերի դէմ իրագործուած ցեղասպանութեան փաստը՝ դրա հետեւանքները դուրս թողնելով Հայ Դատի շրջանակներից:

Հարցին անդրադառնալը արգելւած էր թէ՛ «խորհրդային ժողովուրդների լենինեան բարեկամութեան», թէ՛ պրոլետարակպն ինտերնացիոնալիզմի եւ թէ մանաւանդ՝ արտաքին քաղաքականութեան մէջ Խ.Ս.Հ.Մ. կողմից որդեգրուած սկզբունքների տեսակէտից: Խորհրդային Հայաստանը ընդհուպ մինչեւ Երկրորդ Աշխարհամարտի աւարտը, յամենայն դէպս, հրապարակաւ ընդունել է մի կեցուածք, որը նշուած հարցերում չէր հակասում Խ.Ս.Հ.Մ. կենտրոնական իշխանութիւնների դիրքորոշումներին:

60ական թուականներին, երբ մեզ մօտ թոյլատրուեց խօսել Մեծ Եղեռնի՝ Արեւմտեան Հայաստանում մարդկութեան դէմ գործուած յանցագործութեան մասին, խորհրդահայ մի շարք պատմաբաններ ու քաղաքագէտներ (Ծատուր Աղայեան, Ջոն Կիրակոսեան եւ այլոք) խիզախութիւն ունեցան դարասկզբին Արեւելեան Անդրկովկասում տեղի ունեցած իրադարձութիւններում տեսնել Թուրքիայի ու թուրքերի կողմից հայերի ցեղասպանութեան քաղաքականութեան անմիջական շարունակութիւնը: Սակայն դրանք մնացին բացայայտ կամ ակնարկով արուած դիտողութիւնների շրջանակներում:

Հայ Դատի թեման մեր ազգային գիտակցութեան մէջ գլխաւորապէս մնում էր որպէս Արեւմտեան Հայաստանի հայութեան ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ կոտորածներից փրկուածների պահանջատիրութեան հարց:

Յամենայն դէպս, պէտք է արժանին մատուցել Խորհրդային Հայաստանի այն ղեկավարներին (Գրիգոր Յարութիւնեան, Անտոն Քոչինեան), որոնք, հակադրուելով խորհրդային ղեկավարութեանը եւ պաշտօնական քաղաքական ուղեգծին, «ժամանակին թոյլ տրուած սխալը ուղղելու» հիմնաւորումով բարձրացնում են Լեռնային Ղարաբաղի հարցը: Բայց դրանով հանդերձ պէտք է ընդունել, որ Խորհրդային Հայաստանի դիւանագիտական ու քաղաքական միտքն, այնուամենայնիւ, խնդրի էութեանը համարժէք ձեւով չիմաստաւորեց Խորհրդային Անդրբեջանին զիջած հայկական տարածքների եւ Խորհրդային Անդրբեջանում հայութեան դէմ իրագործուող հալածանքների հարցը: Եթէ ինչոր բան արուեց, արուեց Սփիւռքում, բայց դա էլ, ինչպէս ցոյց տուեցին հետագայ իրադարձութիւնները, բաւարար չէր:

Միայն 1988ին Ստեփանակերտից ծաւալուած իրադարձութիւններով, *Ղարաբաղեան Հարցը* միջազգային հանրութեանը ներկայացուեց որպէս Հայ Դատի հարց՝ բացայայտ ձեւով: Խ.Ս.Հ.Մ.ի լուծարման ընթացքը եւ Ղարաբաղի շուրջ հակամարտութեան վերջին մի քանի տարիները ցոյց տուեցին, որ Ղարաբաղի դէպքում հայոց պահանջատիրութիւնը միջազգային իրաւունքի ու քաղաքականութեան տեսակէտից ունի որոշակիօրէն արտայայտուած իւրայատկութիւն, ինքնուրոյն իմաստ ու բովանդակութիւն:

Որպէս Հայ Դատի հարց՝ *Ղարաբաղեան Խնդիրը* իր պատմութեան զարգացման ու առկայ վիճակի տեսակէտից խիստ տարբեր է Հայ Դատի միւս հարցերից: Եւ եթէ մենք հետամուտ ենք հարցերի լուծմանը, պարտաւոր ենք այն աշխարհին ներկայացնել իր իւրայատկութեամբ եւ այն տեսքով, որն առաւել համապատասխան է ժամանակակից միջազգային իրաւական իրողութիւններին ու միջազգային քաղաքական զարգացումների միտումներին:

Ցաւօք, վերջին տարիների իրադարձութիւնները եկան հաստատելու, որ մեր ազգային-քաղաքական միտքը պատրաստ չէր դրան: Թէ՛ Շարժման առաջին տարիներին, թէ՛

հատագայում մենք խնդիրն աշխարհին ներկայացրինք այնպիսի բանաձեւերում, որոնք հանդիպում էին միջազգային իրաւունքի գործող սկզբունքների եւ միջազգային քաղաքական միտումների դիմադրութեանը:

Յիշենք «Միացում» բանաձեւը, որն իսկոյն առճակատման մէջ մտաւ խորհրդային պետական-իրաւական իրողութիւնների ու քաղաքական «կարգուկանոնի» հետ: Մինչեւ հիմա մեր քաղաքագիտական միտքը չի ուսումնասիրել այն հարցը, թէ այլընտրանքային ի՛նչ կարգախօսներ էին հնարաւոր Շարժման առաջին տարիներին: Նոյնը վերաբերում է հետագայ տարիների զարգացումներին, երբ մեր իսկ մասնակցութեամբ ձեւաւորուեց հակամարտութեան մի կերպար, որտեղ մեզ համար յատկացուած էր զաւթիչի, իսկ ադրբեջանցիների համար՝ զաւթողականութեան զոհի դերը:

Այսօր, ըստ էութեան, *Ղարաբաղեան Խնդրի* դէպքում հայոց պահանջատիրութիւնը դարձել է միջազգային իրաւական, քաղաքական ու դիւանագիտական յստակ խնդիր, եւ մեզ համար նպաստաւոր նրա լուծումը պահանջում է մասնագիտական արհեստավարժ մօտեցում:

Հարցի լուծման նախապայմանը նախադրեալը մնում է միջազգային հանրութեանը այն հայանպաստ ձեւով ներկայացնելը: Այլեւայլ փաստերի կողքին յատուկ նշանակութիւն կարող է ունենալ Արեւելեան Անդրկովկասում (Ադրբեջանում) իրագործուած հայահալած քաղաքականութիւնը:

Մտահոգիչ է, սակայն, որ ցայսօր հակամարտութեան կերպարից դուրս է մնում Արեւելեան Անդրկովկասի հայութեան դէմ դարասկզբի թուրքական զաւթողականութեամբ սկսուած եւ մինչեւ օրս շարունակուող ցեղասպանութեան քաղաքականութիւնը:

Օգտուելով մեր անգործութիւնից՝ Բաքուն ինքն է արդէն աշխարհին ներկայացնում կեղծ մի պատմութիւն այն մասին, թէ, իբր, Արեւելեան Անդրկովկասում թուրքերն են անցնող դարում հայերի կողմից ենթարկուել ցեղասպանութեան:

Նախագահ Հ. Ալիեւի ցուցումով արդէն բազմաթիւ հրապարակումներ են տարածուած Բաքուի 1918 թ. մարտեան իրադարձութիւնների մասին, որոնցում, փաստերի բացայայտ աղաւաղումով, Բաքուի Կոմունայի դէմ մուսաւաթական խռովութեան ճնշումը ներկայացւում է որպէս հայերի կողմից թուրքերի ցեղասպանութիւն: Աղաւաղելով Խոջալուի դէպքերը՝ Բաքուի քարոզչական մեքենան համաշխարհային հանրութեան մօտ նոյն ձեւով ստեղծում է հակամարտութեան մի կերպար, ըստ որի, ադրբեջանական ժողովուրդն է հայերի կողմից ենթարկւում շարունակական ցեղասպանութեան: Բաքուն «սարքում է» հայերի կողմից ադրբեջանցիների ցեղասպանութեան առասպելը եւ ծեծում է միջազգային դատարանների դռները, իսկ մենք, ունենալով թէ՛ բաւարար հակափաստարկներ, թէ՛ իր բնիկ հողերից բռնութեամբ տեղահանուած միլիոնից աւելի հայ ազգաբնակչութիւն, ոչ մի կերպ չենք հակազդում դրան:

Առանձին հետազօտողների աշխատանքները, որոնցում մերկացւում է այդ կեղծիքը, մնում են մի տեսակ օդում կախուած ու անհետեւանք, քանի որ չեն օգտագործւում պաշտօնական քաղաքականութիւն իրագործող ծառայութիւնների կողմից:

Բայց սա հարցի միայն մի կողմն է: Ոչ պակաս կարեւոր է հարցի զուտ իրաւական կողմը, քանի որ որպէս այդպիսին, *Ղարաբաղեան Խնդիրը* առաջիկայում ծաւալուելու է հէնց միջազգային իրաւական հարթութեան վրայ: Այստեղ էլ, սակայն, անցած տարիներին մենք ինքներս մասնակցել ենք մեզ համար աննպաստ դիրքերի ձեւաւորմանը:

1988ից ի վեր մեր գլխաւոր փաստարկը մնում է ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքը, որը խոշոր տէրութիւնների կողմից միտումնաւոր եւ արհեստական ձեւով հակադրուած է տարածքային ամբողջականութեան դրոյթին: Մեզ գցել են այդ կեղծ հակասութեան ծուղակ եւ, պէտք է ասել, մենք մինչեւ հիմա գլուխ չենք հանում գործից:

Յենուելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրայ՝ մենք, ուզած-չուզած, հակադրւում ենք խոշոր տէրութիւնների կողմից վարուող գծին, համաշխարհային քաղաքական զարգացումների հիմնական միտումներին: Մեր դիրքորոշումը չի կարող դուր գալ որեւէ բազմազգ երկրի: Լինելով Ռուսաստանի դաշնակիցը՝ մենք վարում ենք մի գիծ, որն անհաշտ է Ռուսաստանի արմատական շահերի հետ: Նոյն դրժուարութիւնն ենք դիմագրաւում Կոսովոյի հարցում: Լինելով հանդերձ սերբերի համակիրը՝ մենք մեր յայտարարութիւններում շարունակում ենք պաշտպանել ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը, ինչը ակամայ ծառայում է ալբանացի անջատողականների շահերին: Մի խօսքով, մենք աշխատանք պիտի տանենք, որպէսզի ընտրենք աւելի անվտանգ մարտավարութիւն:

Այլընտրանքային մօտեցման էութիւնը հետեւեալն է՝ մենք չպէտք է ժխտենք տարածքային ամբողջականութեան սկզբունքը եւ, դիմելով հիմնախնդրի իրաւական փաթեթին, տափածաշրջանի վերաբերեալ գործող միջազգային պայմանագրերին՝ պնդենք ու ապացուցենք, որ տարածքային ամբողջականութեան սկզբունքն իր յայտնի իմաստով կիրառելի չէ Ադրբեջանական Հանրապետութեան նկատմամբ, որ գործող միջազգային պայմագրերով Լեռնային Ղարաբաղը (ինչպէս նաեւ՝ Նախիջեւանը) չի կարող դիտուել իբրեւ մերօրեայ Ադրբեջանական Հանրապետութեանը պատկանող տարածք:

Նման դիրքորոշումը հաշտ է թէ՛ ազգերի ազատ ինքնորոշման, թէ՛ տարածքային ամբողջականութեան սկզբունքների հետ: Սակայն դա հնարաւոր է անել, եթէ մենք յետ կանգնենք խնդրի քաղաքականացման մեր որդեգրած ուղեգծից եւ դիմենք իրաւական փաթեթին:

Վերը շարադրուածը հաստատում է մի բան. խնդիրը միայն այն չէ, որ *Ղարաբաղեան Հարցը* մեր ազգային գիտակցութեան մէջ ըմբռնելի է որպէս Հայ Դատի հարց: Շատ աւելի կարեւոր է հարցի լուծմանը հետամուտ լինել միջազգային իրաւական ու քաղաքական դաշտի խորը իմացութեամբ, դիւանագիտական արհեստավարժ գործունէութեամբ: Այլապէս մենք յաջողութեան չենք հասնի:

Իր ընթացքով՝ *Ղարաբաղեան Խնդիրը* մեզ համար կարող է լինել միջազգային քաղաքական ու դիւանագիտական այն դպրոցը, որտեղ ձեռք բերած փորձը կարող է օգտակար լինել Հայ Դատի միւս հարցերի լուծման համար:

Այս առումով պէտք է նշել, որ Հայաստանի իշխանութիւնները Հայ Դատի հիմնահարցերը աստիճանաբար մտցնում են պետական քաղաքականութեան տիրոյթի մէջ: Դա յատկապէս ընդգծուած ձեւով արտայայտուեց 1998 թուականին, Մ. Ա.Կ.ի Ընդհանուր Ժողովի 53րդ նստաշրջանում Հ.Հ. նախագահ Ռոբերտ Քոչարեանի ելոյթում, որտեղ միանշանակօրէն ասւում է, որ «Օսմանեան Կայսրութիւնում հայերի՝ 1915 թուականի Ցեղասպանութիւնը իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտուեց համաշխարհային հանրութեան կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր յանցագործութիւններ կատարելու» (*«Դրօշակ»*, թիւ 20, 1998 թ., էջ 11):

Հայաստանի իշխանութիւնների կողմից որդեգրուած այս քաղաքականութիւնը կապուած է ոչ միայն հայ ժողովրդի ռազմավարական հիմնահարցերի լուծման, այլ նաեւ՝ տարածաշրջանային անվտանգութեան ապահովման հետ: Որդեգրուած այս քաղաքականութիւնը պէտք է էլ աւելի ամրապնդել, որովհետեւ միայն այս ճանապարհով է հնարաւոր ապահովել համայն հայութեան միասնականութիւնը եւ հայրենիքի հետագայ հզօրացումը:

Չնայած Հ.Յ.Դ.ն եւ միւս ազգային շրջանակները իրենց գործունէութեամբ կարողացել են Հայ Դատի հիմնահարցերը բարձրացնել ամենավերին ատեաններում եւ ջանք չեն խնայել դրանց իրագործման համար, բայց այլ է, երբ այն դառնում է պետական քաղաքականութեան առանցք: Սա ոչ միայն քաղաքական, այլ նաեւ քարոզչական նշանակութիւն ունի, ինչը հնարաւորութիւն կը տայ ձեւաւորելու անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտ եւ հակահարուած տալու այն ներ-քաղաքական ուժերին, որոնք ամէն գնով փորձում են պղտորել հայ հասարակական մթնոլորտը:

Համաշխարհային մասշտաբով առկայ գործընթացները, որոնք միտուած են «նոր աշխարհակարգի» ձեւաւորմանը, ապացուցում են, որ միայն պետական քաղաքականութեան հիմնաւոր սկզբունքների ճըշգրտման ճանապարհով է հնարաւոր ապահովել ազգային անվտանգութիւնը, որում առանցքային նշանակութիւն ունի բոլոր միջոցներով Հայ Դատի հետեւողական պաշտպանութիւնը:

■